



Մ. Ռ. Վարժարանի Յոթելեանին մասնակցող ներկայացուցիչներ եւ հայ բարեկամներ
Կեդրոնը՝ Գերպ. Յովի. Արքեպս. Նազեան եւ Արքաւայրը
(Ս. Ղազար, 17 Օգոստոս 1936)

Գերպ. Արքաւայրը յորեւեանի իմաստն ու վարժարաններու փրկարար դերը չեղտելով հայ ազգին մէջ՝ սրտագեղ շնորհակալութեան խօսքեր ուղղելով պատկառելի հանդիսականներուն:

Կը յաջորդէր պաշտօնական երկարաշունչ ճառը զոր խանդավառօրէն կարդաց Տոքթ. Տէր Ստեփանեան՝ անդրադառնալով Մ. Ռափ. Վարժարանի կատարած մեծ դերին Հայ մշակութային, ընկերային եւ քաղաքական վերածնութեան մէջ, երախտագրութեան արտայայտութիւններով բարերարներուն, Մխիթարեան Միաբանութեան եւ Վենետիկի եւ խալկական պետութեան ասպնջականութեան եւ հովանաւորութեան:

Վարժարանին ուսուցչական մարմնին կողմէն Գերպ. Տէր Լուքա սիրոյ եւ համակրութեան ջերմ եւ անկեղծ խօսքեր կ'ըսէր վարժարանին, աշակերտութեան եւ հայութեան հանդէպ:

Կը կարդացուէին Ս. Պապի, Իտալիոյ պետութեան զանազան Նախարարութիւններուն, Ֆրանս. Սորհրդարանի, Իտա-

լիոյ եւ Ֆրանսայի Ակադեմիաներուն եւ բարձրագոյն հաստատութիւններուն հեռագրական բարեմաղթութիւնները, ծափերու մէջ Իտալիոյ Տանթէ Ալիկիէրի Իտալ լեզուի եւ մշակոյթի բարձր ընկերութեան կողմէ Փրոֆ. Մասսարի արժանիքի բարձր վկայական մը կը շնորհէր Մ. Ռափ. Վարժարանին:

Փակման խօսքը կ'արտասանէր Ծիր. Ե. Թիսսըրան Թարգման հանդիսանալով Պիոս ԺԱ. Ս. Պապին սիրալիւր զգացումներուն նկատմամբ Մխիթարեանց անփոխարինելի բարեբեր զօրքը եւ ամբողջ Հայ ազգին, եւ կը վերջացնէր դնահատութեամբ, բարեմաղթութեամբ եւ օրհնութեամբ:

Գեղարուեստական բաժինը հայ երգին մոդիչ շունչով կատարած էր ողբ. Գ. Ալեմշահի Կիլիկիա երգչախումբը:

Յաւարտ՝ հանդիսականներն ամենամեծ գոհունակութեամբ կ'այցելէին վարժարանին զահլիճներուն մէջ խնամքով կադմակերպուած ցուցահանդէսը — Մ. Ռ. Վարժարանի հարիւր տարուան կեանքը



Ա. Գժին վրայ ձախէն աջ. վարժարանի զահլիճին մէջ
Գերպ. Յովի. Արքեպս. Նազեան, Վենետիկի կուսակալը, Ծիր. Ե. Թիսսըրան,
Ֆերպ. Յովի. Արքեպս. Նազեան, Վենետիկի Պատրիարքը Փիացցա, Գերպ. Արքաւայրը
Ֆերպիմանտ իշխան Սաւոյիոյ, Վենետիկի Պատրիարքը

պատմող յուշեր, նկարներ, դրական-գեղարուեստական փորձեր, հրատարակութիւններ եւն.:

Հիւրասիրութեան վերջ՝ օրուան հանդիսին մոզական մասը տեղի կ'ունենար Ս. Մարկոսի հրապարակին մէջ վենետիկեան երազային զիշերով:

Հայ սրտերը անանուն խնդութեամբ կը լեցուէին ի լուր «Բամ փորոտան»ի եւ մեր հայ երաժիշտներուն, որոնց մէջ նաեւ Գ. Ալեմշահի զեղեցիկ կտորները՝ վենետիկի քաղաքապետական 80 հոգինոց նուազախումբով:

Կիլիկիա երգչախումբն ալ իր կարգին լրացուց հայ երգի փառքը՝ սքանչելի տղաւորութեան տակ թողլով երգասէր վենետիկցիները, որ մինչեւ այսօր չեն մոռցած մեր անոյշ երգերը, եւ մեր հայ օրհորդները իրենց շնորհալի տարազներով:

Այսպիսի էր Մուրատ-Ռափայիկեանի յորեւեանի հանդէսը որ փառաւոր էջ մը արձանագրեց հայութեան յիշատակին:

Յորեւեանի հանդէսները կը շարունակուէին: Օգոստոս 17. —

Գարձեալ Ս. Ղազար եւք: Նախկին Սանկտ Միքայիլի հոն է երախտագրութեան մեծ ցոյցին համար:

Նախ կը բանախօսէր Բժ. Երուանդ Արքեպիսկոպոս Նախկին սանկտու եւ Միաբանութեան համագումարին եւ ազգայիններու ու բազմութեան առջեւ, զրուստելով բարերարներն ու Մխիթարեան Հայրերը ազգին ընծայած մեծ բարեբեր համար:

Խօսք կ'առնէին յետոյ Հ. Վարդան Վ. Հացունի եւ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան շեշտելով յարգանքի տրիտուրը մեծ բարերարներուն եւ անոնց օրինակին հետեւելուն: Գերպ. Արքաւայրը կը կատարէր փակումը վերջացնելով իր խօսքերը իր փակումը վերջացնելով իր խօսքերը: «Հատեալ քանդակելի տողերով. «Հաւերամեակը երախտագրութեան տօնը, եւ ուրախ եմ որ դուք հոս եկած էք այդ զեղեցիկ լուսապսակը զետեղելու անմահ հիշատակներու եւ Մեծին Մխիթարայ յիշատակին համար»:

Օգոստոս 17-ի եւ 18-ի օրերուն նախկին աշակերտներու խումբը Հ. Վարդան Վ. Հացունիի, Հ. Քերոբէ Վ. Զրաքեանի եւ Հ. Նղիա Վ. Փէշիկեանի ներկայութեան համագումար նիստեր ունեցան զեղեցիկ զաղափարներու եւ ծրագիրներու մշակումով՝ ի նպաստ իրենց վարժարանին:

Օգոստոս 20-ին պաշտօնական այց փեղարոյ պալատին՝ որ 1836էն 1850 նախկին հանդրուան եղաւ Ռափայէլեան վարժարանի: Հոն կը բանախօսէր Հ. Ղեւոնդ Աթոռակալ Վ. Ը. պատմական վերլիչումներ. ուսկից վերջ ընդունելութիւն:

Ճաշէն վերջ ամալերջի հանդէս Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ: Այս առիթով Սաչիկ Ալէմշահ կը կարգար Փարիզի Նախկին Աշակերտաց Միութեան կողմէ բանախօսութիւնը որ կարելի չէր եղած կանխաւ՝ ժամանակի պակասով:

Հանդիսաւոր փակումը 23 Օգոստոսին Ազոլոյի մէջ, ուր վարժարանին չքնաղ ամարանոցը կը տիրէ վենետիկեան դաշտագետին, խառնելով իր հինաւորաց յիշա-

տակները կատարինէ Գոռնարոյի պատմական զգեստներ:

Ճաշէն վերջ Նախկին Աշակերտաց Միութեան պատուիրակութիւնը ծաղկեալ սակ մը կը նուիրէր քաղաքին անկեալ զինուորներուն, ինչպէս կանխաւ ըրած էր Վենետիկ՝ Լիտոյի ուխտական տաճարին մէջ հանգչող զիւցաղներուն:

Ու խուռն ամբոխը, հայ եւ իտալացի, հիւրասէր քաղաքին անօրինակ ցոյցներուն մէջ, կը փութար մայր տաճարը՝ ուր տեղի ունեցաւ հայածէս գոհարանական երգը ի փակումն մեծ Յորելեանին: Անկէ յետոյ հանգիստական բազմութիւնը փոխադրուեցաւ Գոռնարեան պալատին մեծ թատրոնին մէջ, ուր Փրոֆ. Լեւոն Կիւրեղեան արտասանեց երկարաշունչ ճառ մը՝ ներդրելով հայ եւ իտալ յարաբերութեան մէջ Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, անոր կատարած մեծ դերը եւ տուած դարաւոր հունձքը, երախտագիտութեան զգացումներով հանդէպ իտալական ազնիւ ազգին:

Հուսկ ժողովուրդը մեծ թատրոնէն կը



Ազոլոյի քաղաքապետարանին մէջ Առաջին դէին վրայ կը տեւանին - ձախէն աջ՝ Հ. Սիմոն Երեմեան, Գերպ. Պետրոս Արքեպս. Բէտինեան, Ոստիկան մը, Հ. Քերոբէ Վ. Զրաքեան, Գերպ. Արքեպս. Սէր Կիւրեան, Գարեան, Ազոլոյի քաղաքապետը, Հ. Գէորգ Ոսկեան, Հ. Տիմոթէոս Տէր Կիւրեան, Ետեւը՝ Նախկին սաներ, վարդապետներ, համդիսակամներ (Ազոլոյ, 23 Օգոստ. 1936)

հրաւիրուէր քաղաքապետարան՝ ուր տեղական իշխանութիւնը շատ ճոխ եւ սերտ լին հիւրասիրութիւն մ'ըրաւ բոլոր հայ հանդիսականներուն:

Երկու կողմէն փոխանակուեցան կեցեցեանք, բարեմաղթութիւններ իտալիոյ, Հայաստանի եւ Մուրատ-Փափայէլեան վարժարանի հասցէին:

Գերպ. Յովհ. Արքեպս. Նազլեան ի զեմաց հայերուն ջերմ շնորհակալութեան արտայայտութիւններ կ'ընէր տեղական իշխանութեանց «Կեցցէ՛ իտալիա» ոգեկոչումով:

Ուշ երեկոյ է, 200 հոգւոյ չափ նախկին սաներ եւ ազգայիններ ընթրիքի են Մուրատ-Ռափայէլեանի ամարանոցին մէջ. բաժակաճառեր, ուրախութիւն, կեցցեցեանք:

Եւ մեծ յորելեանը կը փակուի: Հոս արձանագրենք որ իտալական Պեթարուր բեղուն գործունէութիւնը յոթնութիւնը զնահատելով Միութեանց զարաւոր լոյս կը հանէր բացառիկ չքեղ հատոր մը՝ յաւերժացնելով պանծալի յորելեանը:

Իտալիոյ) հրամանատարութեան պատիւն ու նշանը Միարանութեան Արքեպս. Պետրոս Արքեպս. Սէր Կիւրեան ալ իր կարգին կը շնորհէր երկու ոսկի մետալիոն՝ մին Գերպ. Արքեպս. եւ միւսը Մուրատ-Ռափ. յորելեան վարժարանին:

Արձանագրենք զարձեալ որ Յորելեան-կան փառահեղ հանդէսներու յաջողութիւնը արդիւնքն էր ջանքերուն կազմակերպիչ Յանձնախումբին՝ որուն վարիչն էր Գերպ. Սէր Կիւրեան, եւ ոգին եղաւ Հ. Քերոբէ Վ. Զրաքեան, օրուն տեսուչը Մ. Ռ. Վարժարանին:

Այդ առիթով կը հրատարակուէր Յանձնախումբին խնամքով՝ Հ. Բարսեղ Վրդ. Սարգիսեանի «Երկհարիւրամեայ կըթական զործունէութիւն վենետիկ Միութեան Միարանութեան» հատորը եւ զեղեցիկ մետալիոն մը Մուրատ եւ Ռափայէլեանի մետալիոն մը Մուրատ եւ Ռափայէլեանի:

Իսկ բարեբարները ներկայացնող յիշատակներ իտալական լեզուով կը հանէր բացառիկ չքեղ հատոր մը՝ յաւերժացնելով պանծալի յորելեանը:



Երախտագիտական ցոյց Նախկին Սաներու, համդէպ բարեբարներուն եւ Միութեան Միարանութեան՝ ի ներկայութեան վանական Հայրերուն եւ յորելեանին մասնակցողներուն (Մատենադարան Ս. Ղազարու, 17 Օգոստոս 1936)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ա. ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ - ՓԱՐԻՋ

Եթէ Մուրատ-Ռափայէլեանի հանդէսը Ս. Պապի ներկայացուցիչ կարգինալով եւ Սաւոյիոյ տան իշխանով փայլեցաւ, Մուրատեան Վարժարանն ալ ուրիշ պատմական փառքեր արձանագրեց շնորհիւ Գաղղիոյ Պետութեան եւ Կաճառին որ ուղղակի կը մասնակցէին մեծ յորեկանին։

ա. - Յունիս Յին բացում յորեկանին՝ հանդիսաւոր պատարագով՝ զոր մատոյց վարժարանին մատրան մէջ Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան, որ Մայիս 29ին փարիզ հասած էր ընկերակցութեամբ Միաբանութեան ընդհ. քարտուղար Հ. Եղիա Վ. Փէչիկեանի։



Ֆրանս. Ակադեմիայի մէջ ընդունելութեան վերադարձին (12 Յունիս 1937)
Ա. Գիծ, ձախէն աջ. Արամ Իննիսեան, Արշակ Զօպանեան, Գերպ. Հ. Յովհ. Թորոսեան, Գերպ. Արքաւայր, Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան, Հ. Եղիա Վ. Փէչիկեան, Զ. Խանգատեան, Ետեւր կը տեսնուին. Սաղքեան, Տէր. Խանգատեան, Տէր. Սեդրէական, Թագաւորեան, Խուլիկեան, Ֆրետ. Ֆէյտի, Համամեան, Տէր Լեւոն Բինյ. Արսլանեան եւ այլք։

Ճաշէն վերջ տեղի կ'ունենար յորեկանի նական հանդէսը ազգայիններու համար, որ խուռն բաղմութեամբ եկած էին։ Վարժարանին թատերասրահի բեմին վրայ ծաղիկ-դրասանդներու մէջ կը փայլէին Մուրատի եւ Ռափայէլի պատկերները։

Կը նախադասէր Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան երկու կողմերն ունենալով Պահապանեան եւ Վոսմապահ եպիսկոպոսները։

Ճառեր խօսեցան Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան՝ վարժարանին տեսուչը, յետոյ նախկին սան Կ. Խուլիկեան, հուսկ՝ Վահան Մալէգեան, ամէնքն ալ փառաբա-



Ձախէն աջ. Զ. Խանգատեան, Խալիոյ ներկայացուցիչը, ներկայացուցիչ Ֆրանս. Արտաքին Գործոց նախարարին, Տ'Օֆանյէ՝ անդամ Ֆրանսական Գիտութեանց Ակադեմիային, Գերպ. Արքաւայր, Ետեւր՝ Գերպ. Կրաֆֆէն, Փոյ. Մարոնիք Պատրիարքին, Ետեւր՝ Ռեմէ Ֆիլէ (Փարիզի քաղաքապետութեան կողմէն), Մարոնիքներու Պատրիարքը Արիտա, Ժորժ Կոյիոյ՝ Ֆրանսական Ակադեմիային, Շարլը Տիլլ՝ անդամ Ֆրանս. Ակադ. Արձանագրութեանց եւ Գերպ. արուեստից, Ետեւր՝ Փիֆար, Պարոն տը Սէլիէր՝ Ակադ. Բարոյական Գիտութեանց, Ետեւր՝ Զօր. Պրեմոն, Վսեմ. Լուի Մարէն, Ետեւր՝ Փոն, Ակադեմիայի ընդհ. վերատեսուչը, Ետեւր՝ (Խորբէն՝ Հայաստանի փառք, Նկար Յ. Աճէմեանի)
(20 Յունիս 1937, Մուրատեան վարժարան)

նելով մեծ բարերարները եւ Միթարեան Միաբանութիւնը։


Գերպ. Արքաւայր շնորհակալութեան խօսքերով եւ Մուրատեան եւ Մ. Ռափայի վարժարանի կատարած բարձր յետադիւրսէրով ի նպատակ հայ սեւերին զրուատելով ի նպատակ հայ սեւերին զատկաբարակութեան՝ փակուելու հանդէսը զոր ոգեւորեց էին խմբերգներ, մեներգներ եւ արտասանութիւններ։

Բ. - Ֆրանսական Ակադեմիային պատմական նիստը. —

Յունիս 12ին նիստի մէջ էին Ֆրանսա-

կան Կաճառի բարոյական եւ քաղաքական բաժիններու անդամները, որոնց մէջ Հանրապետութեան ընդունեցաւ հայ Միլլըրան։ Ակադեմիան ընդունեցաւ հայ պատուիրակութիւնը կազմուած յորեկանական յանձնախումբէն, Մ. Ռ. Նախկին Սաներու վարիչ Ժողովի անդամներէն, Քարեկամներէ՝ որոնց մէջ Արշակ Զօպանեան, Ֆրետ. Ֆէյտի, Եւն. զլիաւորութեամբ Գերպ. Արքաւայր։

Ժողովի բացումին՝ ընդհ. քարտուղար Տը Սէլիէր Ակադեմիականը զրուատեց



Բեմին վրայ Ակադեմականները եւ փրանսացի եւ հայ ընտրանի, մինչ ժորժ Կոյիոյ իր ճառը կը կարդայ (20 Յունիս 1937)
 Սորբեն՝ Ռաֆայելի եւ Մուրատի պատկերները, Կեղրոնը՝ Մխիթար դաստիարակ, գործեր Յարութիւն (Արիւլ) Անէմեանի

Մխիթարեանց դարաւոր կրթական դուրծը եւ Ֆրանսայի հետ կապերը: Յետ Գերպ. Արբաճօր շնորհակալութեան՝ պատուիրակութիւնը հրաժեշտ առաւ:

Գ. - Թէյասեղան ի պատիւ Գերպ. Արբաճօր.

Ակադեմիայէն ելլին Արբաճայրը առաջնորդուեցաւ Պուլոնյը անտառին փաւիյյոն Տոփինի մէջ: Կը մասնակցէին յիշեալ պատուիրակութիւնն եւ ուրիշ հրաւիրեալներ: Ուրախ եւ մտերիմ շրջանակին մէջ կատարուեցան բաժակաճառեր եւ մաղթանքներ:

Դ. - Ակադեմական փառատօնը 20 Յունիսին.

Ֆրանսական Կաճառն էր որ պաշտօնապէս կը հովանաւորէր յորեինական մեծ հանդէսը իր Ակադեմական ընտրեալ ներկայացուցիչներով, Ժորժ Կոյիոյ՝ որ կը նախագահէր, եւ իր քով Արճանագրու-

թեանց եւ Գեղեցիկ Դպրութեանց Ակադեմիայի ներկայացուցիչ՝ Շարլը Տիւ, Բարոյական եւ Բաղաքական Ակադեմիայի ներկայացուցիչ՝ Տը Սէլէր, Գիտութեանց Ակադեմիայինը՝ Տ'Օքանյը, փարիզի Ակադեմիայի վարիչի ներկայացուցիչը, Փարիզի քաղաքապետութեան կողմէն Ֆիքէ, Ֆրանս. խորհրդարանի Նախագահ Էրիոյի ղեւանապետը, Մարոնիթներու Արիտա Պատրիարքը իր հետեւորդ եպիսկոպոսներով, Գերպ. Ուլուհոճեան Արբաճայր, Արտաքին Գործոց Նախարարին ներկայացուցիչը, Իտալիոյ ղեսպանին եւ հիւպատոսին ներկայացուցիչները, Մուրատեան վարժարանի հովանաւորիչ մարմնին կողմէն Նախարար Լուի Մարէն, Փիքոյ, Սեւրի քաղաքապետը, ազգային դէմքեր, բարեկամներ եւ բազմաթիւ հրաւիրեալներ:

Պատմական ճառեր խօսեցան՝ Նախ նա-



Ակադեմական Հանրի Պորտոյ կը նախագահէ Մամուլի Մուրատեան վարժարանի ամսվերջի հանդէսին (1937) որպէս փակում Յոբելեանին
 Զախէն աջ. Արշակ Խան, Հրամ. Զ. Խանգատեան, Տիկին Արշակ Խան, Օր. Փոլ (Paule) Պորտոյ իր Մասփարի ճշմանքին հետ, Մ. Մարքէոսեան, Հանրի Պորտոյ, Գեր. Հ. Յ. Թորոսեան, Արքաւայր Ուլուհոճեան եւ Հ. Սեւր Մովսէսեան

խաղահը Ժորժ Կոյիոյ, յետոյ մեծ բիւղանդադէտը Շարլը Տիւ, դրուատելով Մխիթարեանց մեծ դուրծը եւ վարժարանին ընձեռած օգուտը Հայ ազգին: Անոնցմէ վերջ խօսք առին Փիքէ՝ քաղաքապետարանին կողմէն եւ հուսկ Լուի Մարէն: Յաւարտ պաշտօնական ճառերուն՝ հաջերէն շնորհակալութիւն յայտնեց յանուն Մխիթարեան Միարանութեան եւ վարժարանին Տեսչութեան՝ Գերպ. Ուլուհոճեան Արբաճայր, որուն Փրանսերէն թարգմանն հանդիսացաւ վարժարանին քաղաքական, Տեսչութեան Պրն. Զատիկ Պատրիարքը յարհուսկ Մարոնիթներու պետութեան: Գերպ. Ֆրանս. պետութեան: Երաժշտական բաժինը ճոխ էր եւ գեղեցիկ Գուրգէն Ալէմշահի ղեկավարած նուազախումբով:

Հանդէսի աւարտին հիւրասիրութիւն վարժարանի փոժիպատուրեան պալատի

մեծ դահլիճին մէջ, ուր ցուցադրուած էին Կ. Աղամեանի, Է. Շահինի, Կ. Շապալեանի եւ Յարութիւն Աճէմեանի (Արիւլ) բաղմաթիւ նկարները:
 Ե. - Ընդունելութիւն Փարիզի քաղաքապետարանին մէջ - 24 Յունիս 1936.
 Փարիզի քաղաքապետութիւնը բացառիկ պատիւ մը կ'ընծայէր Հայութեան՝ ուրիշ պատիւ մը կ'ընծայէր Հայութեան՝ յորեինական վարժարանի յորեինական: Երեք հարիւր ազգայիններ, որոնց մէջ փարիզահայութեան ընտրանին, հաւաքուած էին քաղաքապետարանի Ժան-Փոլ-Լորանս դահլիճին մէջ. պատուոյ տեղն ունէին Գերպ. Արբաճայր Ուլուհոճեան, Մուրատեան վարժարանին Տեսչութիւնը եւ աշակերտներէն ներկայացուցիչ խումբ մը, Նախկին Սաներ եւն. Զօրավարներ՝ Նիսէլ եւ Պրեմոն, վսեմ. Փիքոյ, Գերպ. Գր. Արքեպոս. Հինաթէ վիճակաւոր Հալէպի:

ՄԻԽԹԱՐ ԱՐԲԱՆՈՐ ՄԱՀՈՒՄՆ ԵՐԿՈՒՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ

1749 - 1949

Քսանեհինգամեայ շրջանին կատարուած Յորելեաններուն ամէնէն մտերիմը, ամէնէն սիրելին եւ փառաւորը եղաւ ապիկա, քանի որ վերջիշումն էր առ Աստուած փոխման Միարանութեան Հօր եւ Հիմնադրին, Հայ ազգի մեծ առաքելին եւ երկրորդ Լուսաւորչին՝ յիշատակ տրտուր եւ պանծալի միանգամայն՝ որ անշատում է. պանծալի՝ անոր յաղթական մուտքով երանական աշխարհին մէջ, փառքով պատկուած իր մեծ հաւատքով եւ քրտինքով կերտած անդուգական գործին՝ որ Հայ ազգի հոգեւոր, մտաւոր եւ մշակութային վերածնունդն է իր հիմնած Միարանութեան ձեռքով, որ սկսուած 260 տարիներ առաջ՝ կը շարունակէ տեւական հրաշքի մը պէս նախախնամութեան շնորհիւ եւ Տիրամօր խնամքով, ճաճանչումովը Ս. Ղազարու վերեւ անճառ «Եղիցի»ին որ հիմնական խորհուրդըն է Միւրթարեան Միարանութեան՝ Սեւանի մէջ յայտնուած:

Գերպ. Արքահօր պատգամը 7 փետրուար 1949ին կ'աւետէր բացումը մեծ Յորելեանին Ապրիլի 27ով որ նուիրական օրն էր անոր առ Աստուած փոխման, ու պիտի տեւէր ամբողջ տարի մը, փառահեղ փառքով մը որ տեղի ունեցաւ 1950ի Սեպտեմբեր 10ին:

Յորելեանը տօնուեցաւ զանազան դէրուադներով: Առաջինը 1949 Ապրիլ 27ին: Փառատօն զոհարանական՝ ճաշաւոր պատարագով զոր մատոյց Գերպ. Արքահայրը: Եւ այսպէս բացուած էր յորելեանը:

Կէսօրէն վերջ՝ գրական երաժշտական հանդէս Մուրատ - Ռափայէլեան վարժարանին մէջ նախապահութեամբ Վենետիկի նորընտիր Պատրիարք Քարլոյ Ակոս-

տինի, որուն հետ հանդէսին փայլ կուտար Գերպ. Յովհ. Ուրպանի (այժմեան Պատրիարքը), ու լայն մասնակցութիւն մը եկեղեցական, քաղաքական հաստատութիւններու, հայ եւ իտալացի խումբ բաղմութեան մը:

Հանդէսը յատկապէս իտալացիներուն համար էր:

Գերպ. Արքահօր բացման խօսքէն եւ Ս. Քահանայապետին կողմէ օրհնութեան նամակի ընթերցումէն յետոյ Գերպ. Յովհ. հաննէս Ուրպանի ղեկեցիկ ներբողեանը կը հիւսէր Միւրթար Արքահօր կեանքին ու գործին՝ որ Հայ ազգին հոգեւոր եւ մշակութային վերածնունդն էր:

Ճոխ եւ մեծապէս յաջող էր երաժշտական բաժինը հիւսուած Կոմիտասի երգերով որ ղեկեցիկ փառքովն եղաւ հանդէսին:

Հայ հասարակութեան վերապահուած հանդէսը տեղի կ'ունենար Մայիս մէկի Կիրակին՝ Ս. Ղազարի մէջ:

Այդ օրը Ս. Ղազար թափած էր հոծ հայութիւն մը իտալիոյ բոլոր քաղաքներէն անօրինակ խանդով՝ պատուելու մեծ Լուսանորդի յիշատակը:

Առաւօտ դարձեալ հանդիսապէս կը պատարագէր Գերպ. Արքահայրը՝ յաւարտելով Հիմնադրի գերեզմանին վրայ ծնրադիր կատարելով յարգանքի եւ զոհարանութեան ուղերձ մը, աղօթելով որ Աստուած երկրիս վրայ եւս սուրբերու փառքը շնորհէ անոր որ երկնքի մէջ արդէն փառաւորուած է:

Գրական-երաժշտական հանդէսը տեղի ունեցաւ Միւրթարակերտ մատենադարանին մէջ:



Ամեն. Քարլոյ Ակոստիմի Պատրիարքը իր աջին ունեցալով Գերպ. Արքահայրը եւ ճախին՝ Գերպ. Ուրպանի (այժմեան Միւրթարի Պատրիարքը) (17 Ապրիլ 1949)

Ծաղիկներու բուրումին հետ սրտերն էին որ յուզումով սիրոյ եւ զմայլումի իղձեր կ'արտայայտէին:

«Ձարթիր աշխարհ»էն վերջ կարգացուեցաւ Ս. Քահանայապետի օրհնութեան հեռագիրը:

Գրաբար պաշտօնական ներբողեանը հիւսեց Հ. Սեբորէ վ. Ագլեան, որմէ վերջ խանդավառ բանախօսութիւններ հիւսեցին Նախկին Աշակերտներէն Բժ. Երուանդ Արզումանեան, Բժ. Արամայիս Սրապեան, Յակոբ Աղամեան եւ վանահաններէն՝ Եղ. Յովսէփ Պեհեսնիլեան:

Գեղարուեստական մասին մէջ յուզումով կ'ունենդրուէին Միւրթար Արքահօր հոգեւոր ղգայուն քերթուածները իր իսկ յօրինած անոյձ եղանակներով: Անոնց կ'ընկերակցէին զաշնակով՝ Հ. Ներսէս վ. Տէր Ներսէսեան, ջութակով՝ Օր Եղի-Մուրատեան եւ թաւջութակով՝ Աղա-սարեթ Միլտոնեան:

Մեներգողներ՝ Տիկ. Հայկանոյձ Աղա-մեան եւ Օր. Նուարդ Յակոբեան: Հան-

դէսը կը փակէր Գերպ. Արքահայրը: Հիւրամեծարութեան պահուն խօսք կ'առնէին՝ Հ. Մեսրոպ վրդ. Ճանաչեան, Բժ. Մանուկ Խանաթկեան եւ Վենետիկի յատէր բարեկամը:

Երրորդ հանդէս մը կը կատարուէր Մայիս 15ին. Վենետիկ քաղաքին՝ Ս. Մարտինոս եկեղեցւոյն եւ յարակից տան մէջ, ուր Միւրթար եւ իր աշակերտները Ս. Ղազարն ստանալէն առաջ՝ երկու տարի ապրել էին՝ աշտեղ ապաստանած, պանդուխտ, փախստական՝ Մեթոնի մէջ զուխտ, փախստական՝ Մեթոնի մէջ հիմնուած առաջին սրբազան կայանին հուրի եւ սուրի մատնուելէն վերջ թուրքերու կողմէն 1715ին:

Ուխտական օր մըն էր ուրեմն՝ վերջիջելու Միւրթար Արքահօր եւ իր աշակերտներուն առաջին կայանը: Եկեղեցւոյն մէջ ներուն առաջին մատոյց Միարաճախաւոր պատարագ մատոյց Միարանութեան ընդհ. Աթոռակալը Հ. Քերթէ Նուրթեան, եւ Աւետարանի երգէն վերջ վ. Չրաքեան, եւ Աւետարանի երգէն վերջ վ. Բաքանչի ներբողեանը հիւսեց Եր. Միւ-

Թաւ Աբրահամը՝ Կարմեղեան կարգէն Հ.
Ֆերտինանտոյ, Դրուատելով անոր ան-
դրդուելի հաւատքը Աստուծոյ վրայ եւ
խորին սէրը հանդէպ հայ ազգին:

Ախտակաճան այցելութիւնը նուիրա-
գործուեցաւ բացումովը մարմարեայ յու-
շարձանին որ զետեղուած Միխիթար Ար-
բաճօր բնակած տան բարաւորին վերեւ՝
կ'անմահացնէր պատմական անցեալը :

Զորքորդ հանդեսը տեղի ունեցաւ Յու-
նիս Ծին, ուր բացի վենետիկի եկեղեցա-
կան ու քաղաքական իշխանութիւններէն
եւ պետական ներկայացուցիչ երեսփոխան
Փոնթիէ հասած էր վենետիկ Justin Go-
dard ֆրանս. Նախարարը մեծարելու
Միխիլի մէջ անոր յաջորդը՝ Պատուոյ
Լեգէտի Ապետութեան բարձր շքանշա-
նով:

Աստուծո Ս. Դադարու մէջ Գերբա. Աբ-
րահօր ձայնաւոր պատարազը՝ որուն ներ-
կայ էին Փրանս. Նախարարը Ժ. Կոտար,
Մալթայի Ասպետներ, Իտալիոյ պետա-
կան ներկայացուցիչներ եւն., որոնք յե-
տոյ կը մասնակցէին միջօրէէն վերը Մու-
րատ-Ռափայէլեան վարժարանին մէջ
զրական-երաժշտական հանդէսին:

Գերպ. Արբաճայրը բացումի խօսքերուն
մէջ ջերմ շնորհակալութիւն կը յայտնէր
Փրանսական եւ իտալական կառավարու-
թեանց, որոնք իրենց յարգանքի ողջոյնը
կը բերէին մեր մեծ Հիմնադրին՝ իրենց
բարձր ներկայացուցիչներով:

Պանդավառ ճառեր խօսեցան՝ ժիւստէն
Կոտար Նախարարը, Ճ. Փոնթի երեսփո-
խանը յանուն Իտալիոյ Կրթական Նախա-
րար Կոնելլայի, յետոյ Փրանսական Հիւ-
պատոսը H. Elie, ամէնքն ալ ներբողելով
մեծ Հիմնադիրն ու իր երախտաւոր Միա-
բանութիւնը իր կատարած բարձր առա-
քելութեամբ Հայ ազգին մէջ:

Գեղարուեստական մասը ճոխ էր և
չառ յաջող. ինչպես Մխիթար Աբրահամ
Երզնկացի Երզնկայի Համանուկյան, Սպեն-
դիարեանի «Երեւանի Էթնոգրաֆ», Օր.





Ջախէն աջ.

Հ. Քերոբէ Արքուական վ. Զրա-
քան, Գերպ. Ն. Արքեպս. Թա-
րոյեան, Գերպ. Լ. Արքեպս. Պա-
քանեան, Գերպ. Ա. Ռոմֆալի-
ն. վ. Գր. Պետրոս Ժե Ազաճա-
նեան, Գերպ. Պ. Արքեպս. Քե-
տիմեան, Գերպ. Արքեպս. Ս.
Ուլուկոնեան, Ոստիկանապետ Ռ.
Տուրանքի, Զինուորական ներկա-
յացուցիչ եւն. (Վեներաբլի, Քա-
ձիւսքինեան, 10 Սեպտ. 1950)

ներ նոյն ինքն ղեկավարին՝ Արքեպիս ֆե-
տրուլլոյի «Suite Mechitar» սքանչելի
գործը եւ Գուրգէն Ալէմազի ներշնչուած
«Հէքեթը»:

Պատմական եւ անմոռաց պիտի մնայ
Սեպտ. 8-10 օրերուն Ս. Ղազարի մէջ
տրուած ցուցահանդէսներուն յիշատակը:

Առաջինը, Մխիթարի շիրիմն էր, ծա-
ղիկներու, խունկի եւ աղօթքներու մէջ
տեսիլ դարձած վանքի տաճարին սրբու-
թեան մէջ: Ու վերին սրահի մը մէջ, ա-
պակեփեղկերու ծոցն ամփոփուած անոր
սրբազան նշխարները, զգեստեղէններ,
անձնական գործածութեան առարկաներ,
նամակներ, հրատարակութիւններ, եւն.:
Երկրորդը հայ տպագրութեան հազուա-

գիւտ հատորները՝ վեներական Աղթարը
- Ուրբաթագիրք - Արգարեան Սաղմոսէն
մինչեւ Միլանի, Հռոմի, Փարիզի, Նոր
Զուղայի, Լիվուռնոյի, Ամստերտամի եւ
Մարսիլիոյ հրատարակութիւնները 1512էն
1750 թուականը:

Երրորդը Հայկական հին եւ մանրանը-
կարչական արուեստի անգին նմոյշներ Ս.
Ղազարի մատենադարանէն՝ 902էն մինչեւ
1650:

Պատմական յորելեանը կ'աւարտէր
խանդավառութեան մը մէջ որ բացառիկ
պիտի մնայ, որ ցոյց կու տար Հայ ազգին
խոր պաշտամունքը հանդէպ Անոր՝ որ
Սահակի եւ Մեսրոպի եւ բոլոր հայ մշա-
կոյթի դարերու փառքը վերանորոգեց:

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՈՅԳ ՅՈՒՆԼԵԱՆՆԵՐ

Վարդանանց դիւցազնաւարտին 1500ամեակը (451-1951)

Մխիթարեան Միաբանութեան հաստատութեան 250ամեակը (1700-1951)

Ինչպէս ազգային բոլոր Հաստատու-
թիւններուն մէջ, այսպէս Ս. Ղազարու
մէջ ալ կը նորոգուէր անմահ յիշատակը
մեր ազգային տարեգրութեանց ամէնէն
մեծ եւ արիւնալի պատերազմին՝ որ դա-
շափարի եւ հաւատքի յաղթանակ էր հա-
յութեան, եւ որուն շնորհիւ հայ ազգը
յուրեւեմ, եւ որուն շնորհիւ հայ ազգը

տոկաց ու տեւեց դարերու ընթացքին:
Փետրուար մէկին (1951) Ս. Ղազարու
տաճարին մէջ կը կատարուէր Գրիստոսի
արեան զոհին հետ յիշատակը զոհարեու-
թեան Ս. Վարդանանց: Կը պատարագէր
Հ. Ղեւոնդ Վ.: Ներկայ էր վեներաբլի եւ
Յ. Ղեւոնդ Վ.: Ներկայ էր Մուրադ-Ռա-
շիջակայի հայ գաղութը եւ Մուրադ-Ռա-
շիջակայի վարժարանի աշակերտութիւնը:

Աւետարանէն յետոյ հոգեբուլա քարոզ
մը քաղցրօրէն կը յուզէր ամէնուն սրտերը
եւ նորոգելով նահատակներուն հաւատքն եւ
հայրենասիրութիւնը հոգիներուն մէջ:

Սեպտեմբեր ութին կը կատարուէր կրօ-
նական հանդէսը Մխիթարեան Միաբա-
նական հաստատութեան 250 ամեակին:

Հանդիսաւոր ձայնաւորը կը մատուցա-
նէր Գերպ. Պետրոս Արքեպս. Քե-
տիմեան Միաբանութեան ծննդեան այդ նուի-
րական օրը Միաբանութեան կ'ընծայէր
երկու քահանայ՝ Հ. Յովսէփ Պեհեմի-
լեան եւ Հ. Ղուկաս Ֆոկիլեան:

Սեպտեմբեր 9ին Մուրադ-Ռափայէլեան
վարժարանի մէջ կը կատարուէր աղաղե-
մական միացեալ հանդէսը ի պատիւ Ս.
Ղազարանանց եւ Մխիթարեան Միաբանու-
թեան:

Ներկայ էին Գերպ. Պետրոս Արքեպս.

Քեփիմեան, Միաբանութեան Ընդհ. Ար-
քեպս. Գերպ. Գրիգոր Վ. Ինճեան,
Միաբանութեան բոլոր Հայրերն ու աշա-
կերտութիւնը, Հռոմի Ք. Լ. վարժարանի
Տեսչութիւնն եւ աշակերտները, ներկա-
Տեսչութիւնն «Մասիս»ի եւ «Յառաջ»ի,
յայտնիչներ «Մասիս»ի եւ «Յառաջ»ի,
վարժարանին տեսչութիւնն եւ աշակերտու-
թիւնը եւ ազգային գաղութը:

Հանդէսը կը բացուէր «Բամ Փորոտա-
ն»ով: Գերպ. Արքեպս. Բացման խօս-
նով կը յիշատակէր 250ամեայ յորելեանը
Միաբանութեան պարզելով անոր գործու-
նէութեան դրոշմը, կատարած դերը ազ-
գային վերածնութեան մէջ:

Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան խան-
դավառ ու տպաւորիչ ճառով մը ներբո-
ղանք կը հիւսէր Վարդանանց դիւցազ-
նանը կը հիւսէր վարդանանց դիւցազ-
նանը, չեղտելով անոր արժէքը եւ
նամարտին, չեղտելով անոր արժէքը եւ
ներշնչումը մեր ժողովրդի սրտին մէջ:

Հ. Մեսրոպ Վ. Ճանաչեան կը խօսէր
Մխիթարեան Միաբանութեան կատարած
Միաբանութեան դերի մասին՝ ազգային մշա-
կութեան պատմութեան մէջ:

Գերպ. Քեփիմեանի կը վերապահուէր
փակման խօսքը երկու մեծ յորելեանե-
րուն: Ան կը շնորհակալ հարկը հետեւելու այն
լուսաշող ճամբուն ուրկէ ընթացան Վար-
դանանց, ինչպէս ցոյց կու տայ Մխիթա-
րի Հաստատութիւնը:

Յորելեանները երկու յիշատակներն ալ
իրենց մեծ տպաւորութիւնը գործեցին՝
խանդավառելով բոլոր հոգիները եւ հրա-
ւիրելով տպրելու եւ գործելու ի սէր
մեր ազգին: